

2575

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 2. 4. ՅԵ. Մ. ԿԵՆՏԱԿՈՒՄ
ԿՈՄՅԵՐԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

807



3K26

L - 35

07 JUN 2000

ՀՊԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Z. Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏԿՈՍԻ
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

3K26
հ-35

Վ. Ի. ԼԵՆԻՆ

(ԿՅԵՄ ՎԵՐԱՆԴԱՆՄԱՆ ԱՌԹԻՎ)

1924
ՏՊԱԳԲ. ՏՊԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 6

145X
1513*

11 MAR 2014
2088

2575.



Պատկեր № 2088

գ. հ. ԼԵՂԵՆԻ

22-92

ԼԵՆԻՆԸ ԶԿԱ...

...Լենինն այլեվս չկա... Արյունատար անոթների աշխատանքը ղեկավարող մութ որենքները խզեցին այդ կյանքը: Բժշկությունը ցույց տվեց, վոր անկարող և կատարելու այն, ինչին կարոտով սպասում և պահանջում եյին միլիոն—միլիոնավոր մարդկային սրտեր: Յեկանց թվում վորքան շատ եյին այնպիսիները, վորոնք առանց յերկար մտածելու իրենց սեփական արյան մինչեւ վերջին կաթիւ կտային, միայն թե կենդանանար, վերականգնվեր մեծ առաջնորդի, Լենինի, անզուզական և անկրկնելի իւլիչի արյունատար անոթների աշխատանքը: Բայց հրաշք չեր կարող կատարվել այնտեղ, ուր զիտությունն եր անոգնական: Յեկ ահավասիկ մենք տեսնում ենք, վոր Լենինն այլեվս չկա... Այդ բառերն այնպես են փլվում մարդու զիտակցության վրա, ինչպես հսկայական ժայռն ե զահավիժում դեպի ծով: Կարելի յե արդյոք հավատոլ: Յերեվակայելի բան ե միթե այդ մտքի հետ հաշտվելը: Ամբողջ ոչխարհի աշխատավորության զիտակցությունը չի կամենա ընդունել այդ փասուը, վորովհետեւ թշնամին չափազանց ուժեղ ե, վորովհետեւ գնալիք ուղին դեռևս շատ ե յերկար, վորովհետեւ դեռևս ավարտված չե այն մեծ աշխատանքը, վոր ամենամեծն ե պատմության մեջ:

Տաս ամսից ավելի յե տեվել հիվանդության յերկորդ շրջանը, վոր ավելի ծանր եր, քան առաջինը: Արյունատար անոթներն—ըստ բժիշկների դառն արտահայտության—շարունակ «խաղում» եյին, դա մի սոսկալի խաղ եր իւլիչի կյանքի հետ: Առողջացումը, համարյա թե

լիակատար առողջացումն ել եր սպասելի: Բայց կատամարով ել կարող եր պատահել: Մենք բոլորս առողջացման եյինք սպասում: Բայց կատաստրոֆը - պատահեց: Ուղեղի կենտրոնական որդանը հրաժարվեց ծառայելուց — և հանգցրեց ամենահանճարեղ մտքի լույսը: Յեզ հլյիչն այլեվս չկա...

Կուսակցությունը վորբացել եւ վորբացել եւ վողջ բանվոր դասակարգը: Ուսուցիչ — առաջնորդի մահվան լուրն առնելիս ամենից առաջ միտքն եւ ծնվում մեջդր: Ի՞նչպես պետք եւ առաջ գնանք: Կտեսնենք արդյոք ճանապարհը: Արդյոք չենք մոլորվի: Վորովհետեւ լինին, ընկերներ, այլեվս մեզ հետ չի:

...Լենինը չկա, բայց կա լենինիզմը: Լենինի մեջ անմահը նրա ուսմունքը, նրա գործունեությունը, նրա մեթոդը, նրա որբնակն եր. այդ անմահն եւ ապրում նաև մեր մեջ, այն կուսակցության մեջ, վոր նա յեւ ստեղծել, այն առաջին բանվորական պետության մեջ, վորի զլուխն եր անցել նա և վորին ուղղություն եր տալիս: Մեր սրբարը նրա համար են այժմ այսպիսի անսահման վշտով բռնված, վոր մենք ամենքս, չնորհիվ պատմության մեծ վորմուծության, լենինի ժամանակակիցներ ենք մեր ծնունդով, աշխատել ենք նրա հետ, դաս ենք առել նրանից:

Մեր կուսակցությունը գործող լենինիզմ եւ: Մեր կուսակցությունը աշխատավորության կոլեկտիվ առաջ նորդն եւ Յեզ յուրաքանչյուրիս մեջ լենինի մի մասնիկն եւ ապրում — այն, վոր մեր ելության լավագույն մասն եւ ի՞նչպես ենք առաջ գնալու: Լենինիզմի լավաերը ձեռներիս: Կդանենք արդյոք ճանապարհը: Կուսակցության կոլեկտիվ մտքով, կոլեկտիվ կամքով — կը գտ-

Յեզ վաղը, և մյուս որը, և մի շաբաթից հետո, և մի ամսից հետո մենք հարց ենք տալու մեզ. միթե, միթե չկա լենինը, վորովհետեւ բնության աներեվակայելի,

անհնար, հրեշտային կամայականություն եւ թվում և դեռ յերկար ժամանակ այդպես եւ թվալու՝ նրա մահը:

Թող ուրեմն ասեղի այն ծակոցը, վոր մենք մեր սրտում զգում ենք և շարունակաբար զգալու յենք ամեն անգամ, հենց վոր հիշենք, վոր լենինը չկա, թող դա յուրաքանչյուրիս հիշեցնի, նախազգուշացնի, թող մեր ականջներում կանչի պես հնչեցնի հետեվյալը — քո պատասխանատվությունը մեծացել եւ, աշխատիր քեզ դաստիարակող առաջնորդիդ արժանի լինել:

Սգի մեջ, վշտի մեջ, ցավի մեջ՝ սեղմենք մեր շարքերն ու սրտերը: Սեղմենք հանուն նոր պայքարի...

Ընկերներ, յեղբայրներ, լենինն այլեվս մեզ հետ չեւ: Գնաս բարով, իլիչ: Բարի յերթ, առաջնորդ:

I. ՏՐՈՅՎԻ

Թիֆլիս, կայարան,
22 հունվարի 1924 թվի



ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆՔ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆՈՒՄ ԼԵՆԻՆԱԿԱՆ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՅՈՒԹՅՈՒՆ

(ՅԵՐԻՄԱՍԱՐԴ ԼԵՆԻՆԱԿԱՆԵՐԻ ԽՆԴԻՐԵՐԸ)

ՅԵՐԻՄԱՍԱՐԴԱԿԱՆ հեղափոխական կազմակերպությունները միշտ և ամենուրեք յուրացրել են այն լովազույն հատկությունները և հեղափոխականությունը, վորոնք անհրաժեշտ եյին բանվոր դասակարգին իր նպատակին համնելու բուրժուազյային հաղթահարելու համար:

Յեթե մենք հետեւելու լինենք յերիմասարդական հեղափոխական կազմակերպությունների պատմությանը, կտեսնենք, վոր, յերբ բանվորական շարժման մեջ առաջացավ ճեղքվածք և կազմակերպվեց ձախ թեվը, յերիմասարդությունը առաջինն եր, վոր հեռացավ դավաճաններից:

Դա թերևս պետք է բացատրել նրանով, վոր այդ կազմակերպությունների մեջ մտնում եյին ավելի յերիմասարդներ, վորոնք ավելի հեղափոխական եյին, բան այն մասը, վորը բանվորական շարժման վերեվի շերտն եր և աստիճանաբար կորցնում եր բանվոր դասակարգի հետ ունեցած իր կապը:

Այդ փաստը ամենից ավելի ցայտուն կերպով հաստատում է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պատմությունը:

Գերմանական բանվորական շարժումը, վորը յերբեմն դեկավարն եր հանդիսանում միջազգային բանվորական շարժման, յերբ վոր ամբողջապես լնկավ բանվոր դասակարգի բյուրոկրատացած վերին շերտերի ազդեցության, տակ սկսեց խայտառակ կերպով նահանջել

Եր պիրքերից և հանուն. հայրենիքի պաշտպանության նետվեց ոպորտյունիզմի գիրկը: Յեվ ահա նըանք, վորոնք յերբեմն բանվոր դասակարգի միակ ղեկավարներն ելին համարվում, ընկան բուրժուական վարչապետների գիրկը:

Ամբողջ սոցիալ-դեմոկրատիան եժանագին աճուրդի հանեց իր սկզբունքները: Ահա այդ ժամանակ հեղափոխական յերիտասարդական միությունները միջազգային հեղափոխական պայքարի կրկեսում առաջնը դուրս յեկան և կեղծ մարքսիստների կողմից կոխուված հեղափոխական կարմիր դրոշակը բարձրացրին ու իրենց յերիտասարդ ձեռների վրա դեպի առաջ տարան: Այդ մասին վկայում ե վոչ միայն գերմանական սոցիալ-դեմոկրատիայի, այլ և բոլոր յելլուպական սոցիալ-դեմոկրատիան կուսակցությունների պատմությունը:

Յեվրոպական պաշտոնական սոց-դեմոկրատական կուսակցությունների մեծամասնությունը անցավ ամենաստոր ու կեղծավոր սոցիալ-շովինիզմի և ոպորտյունիզմի կողմը: Այդպես վարչեցին գերմանական, ֆրանսիական, անգլիական, շվեյցարական և ուրիշ կուսակցությունները:

Իրերի այսպիսի դրության ժամանակ, Յեվրոպայում սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների վրա լնինում եր մի խօշոր և դժվարին պարտականություն—կովկան հեղափոխական միջազգայնականության կովկան սոցիալիզմի համար ու իմպերիալիստական բուրժուազիայի կողմն անցած ոպորտյունիզմի դեմ:

1916 թ. «Յերիտ. ինտերնացիոնալ»-ում գետեղված են մի շարք հոդվածներ, վորոնք կանգնած են հեղափոխական միջազգայնականության տեսակետի վրա և խորատելությամբ են սոցորված դեպի «հայրենիքի պաշտպան» սոցիալիզմի դավաճանները և անկեղծ ձգտում ունեն մաքրելու միջազգային բանվորական շարժումը նրան

թունավորող շովինիզմից ու ոպորտյունիզմից: Այդ ուղղությամբ սոցիալիստական յերիտասարդական միությունները տիրապետող սոց-շովինիզմի մեջ ձեղքվածք առաջացնելու և դեպի հեղափոխական միջազգայնականությունը ձանապարհ հարթելու համար շատ բան ունեյին անելու:

Այն չափազանց փոքր խմբակը, վորը արդեն հեռացած եր պաշտոնական, կեղծ սոցիալիստների առաջնորդներից և միջազգային բանվորական շարժման միասնականությանն ու համերաշխությանը նպաստելու համար նոր աշխատանք եր ձեռնարկել, պետք ե մեծ ուշադրություն դարձներ այդ յերիտասարդության վրա և վերջինիս ոգնությամբ առաջին զրոնը տար իր որերն ապրած II ինտերնացիոնալի ամրոցի վրա:

Իմպերիալիստական կովկին արդեն քաղաքացիական հեղափոխական կովկով պատասխանած յերիտասարդական հեղափոխական կազմակերպություններին չեր հարմարում ու չեր կարելի պատվաստել «սոցիալիստական» նախկին կոչումը:

Կերմանական սոց-դեմոկրատիայի ձախ թեր և ամենից առաջ Լիբկնեխտն ամբողջովին նվիրվում են միջազգային հեղափոխական յերիտասարդության աշխատանքներին:

Սոցիալիստական դեպին յերիտասարդական միություններից բաժանված միջազգային-հեղափոխական մաս սը իրեն անվանում ե «Սպարտոկ»—ներոնյան բռնակալության դեմ ապստամբած գլազիատոր-ստրուկների առաջնորդի անունով:

Հեղափոխական յերիտասարդական կազմակերպությունները և առաջին հերթին կ. Լիբկնեխտը, վորը այդ շարժման զրուխն եր կանգնած, այդ միությունները կոչում են «Սպարտ տկ»-ի անունով նույնպես և նրա հա

մար, վոր Կ. Մարքսը իրեն նամակներում միշտ մեծ սիրով եր հիշում այդ անունը և նույն իսկ իր յերեխաներին անվանում եր Սպարտակ և հաճախ կարդում եր Հոռմի թագավորության և մասնավորապես ներոնյան շրջանի պատմությունը և Սպարտակի ապստամբությունը:

Զարմանալի չի, վոր գերմանական յերիտասարդական հեղափոխական միությունները յուրացրել են Սպարտակի անունը: Այդ անունը միշտ պետք է ցույց տար նրանց բուրժուական հասարակության տիրապետության վերացման ճանապարհը, բաց դասակարգային դաժան կովի միջոցով՝ բանվոր դասակարգի իշխանությունը հաստատելու համար:

Իր ծագման առաջին որերից յերիտասարդական շարժումը աչքի յե ընկել բուրժուազիայի դեմ մղած իր անձնվեր ու հեղափոխական կովով: Նա դաստիարակվել ե այն հոգով, վորը կապված է անմիջականորեն Սպարտակի անվան և նրա պատմական անցյալի հետ:

Յեկ «Սպարտակյան» յերիտասարդական հեղափոխական միությունները ցույց տվին, վոր նրանք կարող են գործել այնպիսի վճռականությամբ, ինչպես Սպարտակը:

Այդպիսի անվեհերությամբ, ինչպես և Սպարտակը, յերիտասարդ բանվորները գրո՞ն տվին գերմանական միապետության և ողորտյունիստական ցեխով ապականված սոց-գեմոկրատիայի վրա:

Յերբ Մարքսիզմի շքանշանը կրող սոց-գեմոկրատական սպասավորները քաշ եյին գալիս բուրժուազիայի հետեց, թունավորելով շովինիզմի թույնով ամբողջ աշխարհի աշխատավորության միտքը, յերբ նրանք Մարքսիզմի ամբողջ բազամը զոհաբերեցին բուրժուազիայի Մոլոխին (պատերազմի աստված) — այդ ժամանակ բանվորական ազատազրական շարժման հորիզոնում հայտն-

վեց մի նոր, հզոր գեմք, վորը կոչ եր անում ամբողջ բանվորական աշխարհին հանուն յերջանիկ ապագայի բաց կոիվ մղել շահագործողների դեմ: Այդ նոր գեմքը, Վ. Ի. Լենինը, իմպերիալիստական վակինանալիայի շրջանում, կարողացավ վառել և պինդ պահել իր ձեռներում միշտագային պլութարկական հեղափոխության ջահը:

Լավ աիլրապետելով մարքսիզմին, նա կարողացավ գործածել այն՝ հոգուտ բանվոր դասակարգի շահերի:

Իմպերիալիզմի զարգացումը խոր ուսումնամիրության յենթարկելով, Լենինը կարողացավ գծել պլութարկատիա դասակարգային պայքարի ուղիները:

Նա միակն եր մարքսիստներից և առաջինը, վոր կարողացավ մարքսիզմի գենքը դեղին ինտերնացիոնալի առաջնորդների դեմ ուղղել: Նա յերկար տարիների ընթացքում համաշխարհային բանվոր դասակարգին կոչ արեց բաց դասակարգային կովի դուրս գալ բուրժուազիայի դեմ, ուժի միջոցով տապալել կապիտալիստական դասակարգի տիրապետությունը և հաստատել պլութարկատիա դիկտատուրան:

Բանվոր դասակարգին դեպի հաղթանակ առաջնորդելու համար անհրաժեշտ եր կազմակերպել պլութարկատիա առաջավոր գնդերը և հիմնել աշխատավորության ազատագրական պայքարը դեկարպող մի հզոր բանվորական կուսակցություն: Լենինը յուր համառ աշխատանքով 25 տարվան ընթացքում ձուլեց Ռուսաստանի կոմունիստական պողպատյա կուսակցությունը և բանվորական շարժման լավագույն տարրերին մտցրեց նրա մեջ ու մեր կուսակցությանը սովորեցրեց բանվոր դասակարգին գրոհի մղել դեպի բուրժուազիան ամբողջը: Կոմունիստական կուսակցությունը 25 տարի աշխատելով Լենինի դեկարպությամբ և անսասան կովի բռնվելով ոպորտյունիզմի ու սոց-շովինիզմի դեմ, այսոր առանց իր առաջնոր-

դի, նրան կոլեկտիվորեն փոխարինելով, ոռուսական և նրա հետ միասին միջազգային պրոլետարիատին՝ տանում ե գեղի սոցիալիզմը:

Այժմ յերբ մեր կազմակերպությունը կանգնած ե իր համար մի նոր դարաշրջանի շեմքին, կոմսոմոլիստները և առանձին-առանձին ամեն մի կոմսոմոլիստը, պետք ե լուրջ խորհեն մեր կազմակերպության առաջ ձառացած այն խնդիրների և այն ուղիների մասին, վորոնցով ապագայում պետք ե ընթանա մեր աշխատանքը:

Մեր միության վերանվանումը համաշխարհային պրոլետարիատի մեջ և յեզակի առաջնորդի անունով մեր կողմից յերբեք չպետք ե հանդիպի միաժամանակ, ճշան ֆրազների ու աղմկահարության:

Մեր կազմակերպության համար խոշոր նշանակություն ունեցող այդ փաստին պետք ե մոտենալ չափանց լրջությամբ և մտածված:

Կոմունիստական Յերիտասարդական Միությունը, վորպես կոմկուսի պահեստը և բանվորա-զյուղացիական յերիտասարդության միակ ղեկավարը, իր զարգացման ճանապարհին այսոր կատարելով վերանվանման քայլը, խոշոր ու դժվարին պարտականություն ե վերցնում իր վրա:

Այս պատմական քայլը մի ավելորդ անդամ ևս հաստատում է կ. Յեր Միությունն ու իմաստը և յերկար տարիներ շարունակ մատնանշում ե նրա հիմնական խնդիրները:

Կ. Յե. Մ. վերանվանելով Լենինական կ. Յե. Միության, մենք հենց դրանով հիմք դրած կլինենք յերիտասարդական մասսաների - Լենինիզմի վոգով դժուտիարակության:

Յերկրագնդի ^{1/6} մասի յերիտասարդական շարժումը, վորն ընդգրկում ե մինչև կես միլիոն յերիտարարդ բան-

փորներ ու գյուղացիներ, այդ կերպ վերանվանելու իմաստը հենց գրանումն է կայանում:

Կ. Յե. Միության «Լենինական» կոչումը տալը նշանակալից ե այն տեսակետից, վոր մեր կազմակերպությունը գասահարակելով լենինիզմի վագով, կուսակցության համար կպատրաստի յերիտասարդ լենինականների կազմեր, վորոնք կհամար կոմանիզմին, իրենց աշխատանքի ընթացքում, ղեկավարվելով լենինի ուսմունքով, այն ուսմունքով, վորը համաշխարհային պրոլետարիատին գեղի կոմունիզմ առնող ճանապարհի միակ լուս սձաճանչ ստողն է:

Այսոր նոր հիմքերի վրա յենք գնում մեր ամբողջ աշխատանքը: Արյուն քրտինք ենք թափում լենինիզմի եյության մեջ թափանցելու համար: Կես միլիոնանոց յերիտասարդ բանվորներ ու գյուղացիներ ամբողջ աշխարհի աշխատավորության յերջանիկ ապագան կռող լենինիզմի զենքովն ենք զինում: Ահա այդ ժամանակ անհրաժեշտ ե կանգ առնել մեր աշխատանքի գլխավոր թերությունների և այն մեթոդների վրա, վորը հնարավորություն կտա յերիտասարդության իր վրա դրված պատմական միստիան ի կատար ածել:

Ո. Կ. Յե. Մ. III համառուսական համագումարում (20 թ.) ընկ. Լենինը խոսելով Սոց. Հասարակետությունների Յերիտասարդական Միությունների մասին, ասում եր. «մեր ժամանակակից յերիտասարդության առաջիկա անելիքը կոմունիստական հասարակարգի կառուցումն է:

Կառուցումն է, վորովհետեւ պարզ ե, վոր կապիտալիստական հասարակության մեջ գաստիարակված ներկա աշխատավորների սերունդը լավագույն գեղքում կարող ե լուծել միայն աշխատավորության շահագործման վրա հիմնված հին հասարակության վոչնչացման խնդիրը»:

«Յեվ ահա այդ տեսակետից յելնելով յերիտասարդության անելիքների մասին յես պետք ե տեսմ հետեւյալը

— յերիտասարդության ամենակարեվոր խնդիրն եւ սովորել։ Շատ բնական եւ, վոր յերիտասարդական միությունը և ընդհանրապես ամբողջ յերիտասարդությունը, վորը ձգտում եւ կոմունիզմին, պետք եւ կոմունիզմը սովորի։ Յերիտասարդական միության խնդիրները բնորոշելով յերկու հիմնական խոսքերով — «սովորել կոմունիզմ», ընկեր Լենինը նախազգուշացնում եւ աճող սերնդին այն չարիքներից, վորոնք կարող են առաջանալ այդ բնորոշման միակողմանի և սխալ բացատրությունից։

«Առանց աշխատանքի ու պայքարի կոմունիստական բրոշյուրներից և աշխատություններից վերցված կոմունիզմի գրքային գիտությունը բացարձակապես փոշինչ չարժե, վորովհետեւ դրանով պիտի շարունակվի տեսության և պրակտիկայի նախկին անջատումը, վորը հին բուրժուական հասարակության զզվելի գիծն եր կազմում»։

Մարքսիզմը հանդիսանում եւ տեսության ու պրակտիկայի կենդանի կապի անհրաժեշտության ամենալավ ապացույցը, նա հենվեց մարդկային ճանաչողության և մարդկային հասարակության զարգացման որենքերի վրա, ցույց տվեց կապիտալիզմի զարգացման անհրաժեշտությունը, վորը տանում եւ գետի կոմունիզմ։

«Հին բուրժուական հասարակությունը քանդված եւ ավերակների մի կույտ եւ դարձել, իսկ կոմունիստական աճող սերնդի պարտականությունն եւ՝ հին աշխարհի վլատակների վրա կառուցել կոմունիստական հասարակությունը»։

Զեր առաջ կառուցման խնդիր եւ դրված։ Այդ խնդիրը կլուծեք միայն այն ժամանակ, յերբ կտիրապետեք ժամանակուիլից գիտություններին և կկարողանաք կոմունիզմի դիտական, պատրաստի ֆորմուլաները, խորհուրդները, դեղատոմները, պատվերները ու ծրագիրները շաղկապել Զեր անմիջական աշխատանքին և կոմունիզմը Զեր

գործնական աշխատանքի ղեկավարման միջոց դարձնել»։

«Աճող սերունդը այն դեպքում կարող եւ սովորել կոմունիզմը, յերբ նա իր սովորելու, դաստիարակվելու կրթվելու ասպարիզում արած ամեն մի քայլը կկապի հին բուրժուական հասարակության դեմ պրոլետարիատի ու աշխատավորության մղած մշտական պայքարին»։

«Յերիտասարդական Միության անդառ լինել — նշանակում եւ իր աշխատանքը և ուժերը ընդհանուր գործին տալ»։

Այդ անհրաժեշտ սկզբունքների մեջ եւ թագնված աճող սերունդի իսկական կոմունիստական դաստիարակության գաղանիքը, վորը և առաջին անգամ ի հայտ եւ բերված Լենինի կողմից մեր ՊԼ-դ համագումարում կարդացած նրա միակ զեկուցման մեջ։

Ըսկ Լենինը առաջնորդին հատուկ իր մտքի խորաթափանցությամբ կարողացավ թափանցել յերիտասարդական կազմակերպության եյության մեջ և ուրվագծել ուղիղ ճանապարհը նրա զարգացման և այն խնդիրների լուծման համար, վորոնք որված են յերիտասարդության առաջ բանվոր դասակարգի ազատագրական պայքարի ընթացքում։

Նա ուսուցանում եր մեզ՝ յեղբայրներ, պետք եւ ըչից սկսել, բայց ինչ ել լինի այդ քիչը՝ պետք եւ լավ կատարել։

Կատարել այնպես, վորպեսզի նա բղիքի ամբողջ սոցիալիստական հանրապետության շահերից։

Մեր կազմակերպությունը խորապես յուրացըել եւ սովորելու, դաստիարակվելու և իրեն ամբողջովին կրթության գործին նվիրելու անհրաժեշտությունը։ Բայց հաճախ յուրաքանչյուր կոմսոմոլիստ պայքարելով ուսման համար, ընկնում եւ այն վրիպումների մեջ, վորոնցից նախազգուշացնում եր մեզ ընկ Լենինը։

Յեկ ներկայումս ել կոմունիստական դաստիարակության լրջությունը գտնում են կոմունիստական գըրքույների ընթերցանության մեջ։ Մտածում են, վոր դրանով հնարավոր ե բազմակողմանիորեն պատրաստվել կոմունիստ դառնալու համար։ Յեկ այժմ իսկ, յերեք տարի հետո այն որվանից, յերբ Իլիչը ցույց տվեց մեզ կոմունիստական դաստիարակության ուղիղ ճանապարհը, մենք մեր կազմակերպության մեջ նկատում ենք նրա վոչ ձիշտ և միակողմանի ըմբռնումը։

Յեթե դուք հարց տաք վուե կոմս մոլիստի կոմունիստական հասարակության հիմնական հատկանիշների, մարքսիզմի եյության մասին, դուք դրական պատասխան կստանաք։ Նրանք վերջին տարիների ընթացքում կոմունիստական բրոշյուրներից և գրքերից կարողացել են քաղել այդ բոլորը։ Իսկ ձեր վորես գործնական հարցերին՝ ինչպես կազմակերպել կոռպերատիվը, ինչպես են ընտրվում խորհուրդները, բավարար պատասխան չեք ստանա, վորովինետև մենք մինչև հիմա յել շարունակում ենք տեսականի և պրակտիկայի անջատումը և բավականում ենք միայն կոմունիզմի գրքային ծանոթությամբ։

Սենք լենինին հասկանում ենք, վորպես մի հեղափոխականի, վորը պայքարի յե կոչել Արևմուտքի և Արեվելքի ճնշվածներին բուրժուական հասարակության գեմ, ցույց և տվել նրանց հաղթանակի ուղիները և ամուր, կարող ձեռքով ղեկավարել ե խորհրդային նավը դեպի նորանոր նավահանգիստներ։

Նա մտցրեց մարքսիզմի և պրոլետարիատի պայքարի մեջ այն անհրաժեշտ, վորը բացակայում եր բանվորական շարժման մեջ։

Լենինը հին, պաշտոնական մարքսիստներից հենց նրանով ել տարբերվում եր, վոր կարողացավ պրոլետարիատի գառակարգային պայքարի ավետարանը՝ մարք-

սիզմը ողտագործել հոգուտ այն դասակարգի, վորի համար նա նշանակված եր։ Մարքսը կապիտալիստական աշխարհի բարձունքներից ցույց տվեց հասարակության գարգացման ուղիները, նրա դասակարգային հակասության վրա ուրվագծեց բանվորական շարժման ընդհանուր հեղափոխական ճանապարհը։ Մարքսից հետո անհրաժեշտ եր լենինը, վորը ակտիվ կերպով մասնակցելով աշխատավորության ամբողջ պայքարին, լենդրոնացնում ե իր մեջ միլիոնավոր պրոլետարների և աշխատավոր գյուղացիների ցանկությունն ու կամքը և նրանց առաջ և մղում դեպի հաղթանակ։

Յերբ մեզ հետ չե այլս մեր առաջնորդը և ուսուցիչը, այսորվա մեր անելիքն ե՝ հաստատուն և ձիշտ կերպով յուրացնել այն ուսմունքը, վոր լենինն ե թողել համաշխարհային պրոլետարիատի ազատազրական պայքարին, վորպես մի մարզարիտ, հանձինս լենինիզմի։

Դեռ յերկար ե մեր ուղին և պրոլետարական շարժման գարգացման ճանապարհին գեռ շատ զոհեր պիտի տալ. Պրոլետարիատին և նրա առաջավոր դնդին, կոմունիստական կուսակցությանը, անհրաժեշտ են խոհեմ և աշխատող մարդկանց նոր և թարմ կազմեր, ինչպես լենինն եր խորհում և աշխատում. յերիտասարդ լենինականներ, վորոնք ըստ լենինի ավանդների արժանիորեն կշարունակեն սոցիալիստական շինարարության աշխատանքը։

Ահա թե ինչու մեր կազմակերպությունը լենինական կոմյերիտմիություն վերանվանելը խոշոր նշանակություն ունի կուսակցության համար, այն կուսակցության, վորին կոել ու կոփել ե ընկ. լենինը և վորին նա 25 տարբա ընթացքում գրոհի յե մղել բուրժուական աշխարհի հանդեպ։

Յերիտասարդական Միությունը հանդիսանում է կո-

մունիստական կուսակցության այն ըեզերվը, այն դարբնոցը, վորտեղ բանվոր դասակարգի համար կոփվում են յերիտասարդ նոր լենինականներ, վորոնք նույնպես աներկյուղ ու ամրաժայռ են, նոույնպես նվիրված են բանվոր դասակարգի մեծ գործին, ինչպես իրենց ուսուցիչը և առաջնորդը, Վաղիմիք Իլիշ:

Այսոր բանվոր դասակարգի շարժման մեջ ուժերի շափազանց հետաքրքիր ու նշանակալից խմբավորումներ են կատարվում: Մարդկային հասարակության մի զորաբանակում աճող սերունդները այսոր յերես են դարձնում յերկար տարիների ընթացքում իրենց հիմարացնող սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից, իսկ մյուս՝ պրոլետարական զորաբանակում, բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը ել՝ ավելի առաջ և նետվում և բացառիկ վճռականությամբ անմահ լենինիզմի զենքերով և զինվում: Այսոր վերակազմելով մեր շարքերը և կոչելով մեր կաղմակերպությունը լենինի անունով՝ մենք պետք ե ընդմիշտ հիշենք նրա կտակը, վորի դեկավարությամբ քայլայվեց բուրժուական հասարակությունը, և վորը ցույց տվեց մեր յերիտասարդությանը ճանապարհ և միջոց կոմունիստական հասարակության համար:

Այն ժամանակ միայն ամեն մի յերիտասարդ բանվորն ու գյուղացին լենինական կդառնա; յերբ լենինիզմը կյուրացնե վոչ թե նրա գրքերի և բրոշուրների ուսումնասիրությամբ, այլ կկարողանա լենինիզմի տեսությունը կապել լենինիզմի առողյա պրակտիկային, հետևելով մի նպատակի՝ փոքրիկ պրակտիկ գործերով մեր աղքատ և կարիքավոր յերկիրը դարձնել կոմունիզմի յերկիր:



Վ. Ի. ԼԵՆԻՆ

1870—1924

1924 թվի հունվարի 21-ին իր կյանքի ուղին ավարտեց ընկ. Լենինը. Խոր սպի մեջ մտավ վողջ աշխարհը: Յերկրագնդի բոլոր վայրերում, ամենուրեք, ուր բանվորի և զյուղացու սիրտ և տրոփում, ուր ձնշումն և բռնությունն ե թագավորում, ուր ստրկացվածներ, ձնշվածներ, նվաստացրածներ և վոտնահարցածներ կան—աշխատավորների մեծ ուսուցչի մահն ամենուրեք մեծ վիշտ և առաջացրել:

Վ. Ի. Լենինը ծնվել է 1870 թվի ապրիլի 10-ին (հին տոմարով): Նրա կյանքի ուղին 54 տարուց ել և պակաս տեվել: Վերջին 30 տարիները—Վ. Ի. Լենինի վոչ մի վարկան դադար չունեցող անվախ հերոսական հեղափոխական աշխատանքի 30 տարիներ ելին: Այդ 30 տարիների ընթացքում ընկ. Լենինը վոչ մի վարկան չի կտրվել բանվորական շարժումից: Այդ ժամանակամիջոցում նուևսաստանում կատարված վոչ մի հեղափոխական զործողություն կամ փոքր իշտառ խոշոր նշանակություն ունեցող անցք չենք գտնիր, վոր այս կամ այն չափով կապված չենի Վ. Ի. Լենինի անվան հետ:

Վաղիմիր Իլյին իր հեղափոխական զործունեյունն ուկան է կազան քաղաքում այն ժամանակ, յերբ Ալեքսանդր III թագավորի հրամանով իլյինի յեղբայր Ալեքսանդր Ռուբենովին կախաղան հանելուց մի քանի ամիս եր անցել: Վ. Ի. Լենինը հեղափոխական պայքարի ասպարեզ և մտել, յերբ դեռ ևս կազանի համարանի 1-ին կուրսի ուսանող եր:

Թագավորական կարգերում չեյին կարող հանդորժել, վոր նա, այդ հեղափոխականը, «գիտության տաճարում» մնա. Նրան վոնդեցին համալսարանից: Համալուրանից հեռանալով, նա առ-

միշտ կտրեց իր կապը հին բուրժուական աշխարհից։ Նա գնաց զբկվածների, պրոլետարիատի մոտ և այնուհետեւ նրա և բոլոր յերկրների ու բոլոր ժողովուրդների բանվորների սերտ բարեկամությունը մինչեւ նրա կյանքի վերջին որը անխղելի ֆիաց։

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻԲ

Վոչ մեծ միտինգներում, վոչ պայծառ լուսավորված դահլիճներում և վոչ ել մեծ թերթերում և սկսել իր աշխատանքը վլադիմիր իլյիչը։ Այդպիսի բաների մասին այն ժամանակ յերազել անգամ չեյին կարող բանության և հարստահարության գելյելներու ամեն մի փորձի համար թագավորական կառավորությունը գաղանաբար պատժում եր բանվորներին։ Վաղիմիլ իլյիչը փոքրից ե սկսում, նա իր շուրջն ե հավաքում գեղի բանվորական մասսա գնալու պատրաստակամությունն ունեցող անհամ հեղափոխականներին։ Այդ բանն անում ե նա Սամարայում (1893) և Լենինգրադում *) 1893—1894 թ. թ.։ Այնուհետեւ նսծանոթություն և կապեր ե հաստատում անհատ բանվորների հետ սոցիալիզմի ուսմունքն ե սովորեցնում նրանց, համոզում ե նըրանց, վոր թագավորի ու կապիտալիստների դեմ կովելու համար անհրաժեշտ և կազմակերպվել, և փոքրիկ խմբակներ ե կազմունքանցից։ Լենինգրադի (նախկին Պետրոգրադի) ծայրամասերում բանվորական թաղերում, լիցերում, կիսանկուղային գետնահար կերում 1894—1895 թ. թ. ժողովներ եյին գումարում այդքամբակները և աշխատավորների ազատազրության մեծ գործին եյի պատրաստվում։ Բայց ընկ. Լենինի և առաջին սուս սոցիալ—գեմոկրատների համար նեղ եյին այդ խմբակները։ Նրանք գեղի ընդարձակ բանվորական մասսան եյին ձգում։ Այն ժամանաւ ընկ. Լենինը տպագիր խոսքին և դիմում։ Նա ինքն եր գրուբանվորներին ուղղած թոռոցիկներ (կոչեր), զիցերինի և ժելատինի ոգնությամբ բանվորներից մեկնումեկի խցիկում ինքն ելուագում այդ թոռոցիկները և ուշ զիշերով կամ վաղ առավոտյան ինքն եր տանում և ցրում բանվորական թաղամասերում, կամ իր բարեկամ բանվորների միջոցով արհեստանոցներում եր տարա-

*) Լենինգրադը նախկին Պետրոգրադն ե (Պետերուրզը) Այդ քաղաքը Լենինի անունով են կոչել Վաղիմիլ իլյիչի մահվանից հետո։

ծում։ Ինչի՞ մասին եր գրում կամ խոսում այն ժամանակ ընկենինը։ Նույն այն բանի մասին, ինչի մասին նա խռովել ե բանվորների և բոլոր աշխատավորների հետ իր ամբողջ կյանքի ընթացքում։ Թագավորի, կալվածատերների և կապիտալիստների ըլունության և հարստահարության ու կամայականության վերջ տալու անհրաժեշտության մասին եր խոսում ու գրում նա։ 1895 թ. Լենինգրադում ընկ. Լենինի զեկավարությամբ Ռուսաստանի առաջին սոցիալ—գեմոկրատական կազմակերպությունն ե ստեղծվում (կոմունիստներն այն ժամանակ սոցիալ—գեմոկրատներ եյին կոչվում), վորին «բանվոր դասակարգի պատազգության համար կովազ միություն» անունն են տալիս։ «Միությունը» լենինգրադի շատ փարբեկաններում և գործարաններում իր փոքրիկ բջիջներն ուներ, վորոնց աղղեցությունն որ—որի վրա նըկատելի կերպով աճում եր։

Լենինգրադի ջուլհանուրի ընդհանուր գործադուլը (1896 թ., այնտեղի բանվորների առաջին մասսայական շարժումը՝ «Միության» և ամենից առաջ նըր զեկավար ընկ. Լենինի նկատելի ազգեցության տակ եր գումարում։ Բայց ընկ. Լենինը հասկանում եր, վոր մինչեւ վոր սոցիալ—գեմոկրատների աշխատանքը համառուսական մասշտաբով չմիացվի, նրանց ջանքերը հաջողությամբ չեն պատկին։ Այս պատճառով Վաղիմիլ Խվիչեպատակ գրեց սոցիալ—գեմոկրատական կուսակցություն ստեղծել, իսկ այդ կուսակցությունը կլարողանար վորոց ծրագրի հետեւելով հաստատուն և ուղիղ կերպով զեկավարել պրոլետարիատի պայքարը։ Այդ նպատակով նա ճանապարհորդություն ե կատարում Ռուսաստանում, ամենուրեք սոցիալ—գեմոկրատական բջիջները ու խմբակներ ե ստեղծում և այդպիսով սոցիալ—գեմոկրատական կուսակցություն ստեղծելու համար հող ե պատրաստում։ Յեկանինը 1898 թվին հաջողվեց սուսական սոցիալ—գեմոկրատական կուսակցության առաջին համագումար հրավիրվել, զրապատճառն այն հակայական նախապատրաստական աշխատանքներ, վոր առաջին սուս սոցիալ—գեմոկրատներն եյին կատարել ընկ. Լենինի զլիբավորությամբ։ Բայց «միությունը» յերկարածեվ չեղափ, 1895 թվի գեկտեմբերի 9-ի զիշերը «միության» բուլորաչքի ընկնող գործիչներն, ընկ. Լենինի հետ միասին, ձերբակալվեցին։ Բանտարկությունից հետո (վորը մի տարուց ավելի առևելք) ընկ. Լենինի յերեք տարով աքսոր են ուղարկում Միությունի հեռավոր թեհիսեյյան նահանգի Միությունիկ զավառը։ Վ

Ելիշը աքսորավայրում իր ժամանակն անտեղի չեր կորցնում նա այդտեղ շարունակում և պատրաստվել իր ապագա գործունեության համար. այդտեղ նա իր «Կապիտլիզմի զարգացումը մուսաստմառմ» նշանագոր գիրքն ե գրում. Այդ գրքում վլագիշը զիմափորապես այն հարցն ե քննում, թե բնչպես ե զարդարում անտեսությունը մուսաստանում, բնչպես են առաջանում այնտեղ կուլտակներն ու բուրժուազիան, ինչպես են քայլայլում չքափորները:

Հեղափոխական պայքարի ճանապարհը բռնելով, ընկ. Լենինը սկզբից յեվեր այն համոզմունքն ուներ, որ հեղափոխությունը Թուստանում կարող ե իրականանալ կամ իրեկ բանվոր գասակարգի մասսայական հեղափոխական շարժման ու ապստամբուրյան հետեվանք, կամ այդպիսի հեղափոխություն ամենեվին չի լինի: Կարծես թե այստեղ վոչ մի հայտնություն արգած չի, չև վոր արտասահմանում ապրող առաջին ոռու սոցիալ-դեմոկրատները, վորոնց պարագլուխը Պլեխանովն եր, նույնպես այդ տեսակետի վրա եյին կանգնած: Բայց այլ ինդիք և այդ տեսակետը թերթերում և գրքերում պաշտպանել ե այլ խնդիր և այդ տեսակետի հիման վրա կազմակերպություն ստեղծելու հարկադրել, վոր մարդիկ այդ զաղափարով դեկավարվեն իրենց ամենորյա գործնական աշխատանքի ժամանակ:

Բուրժուական ինտելիգենցիան, վորը 90-ական թվականների վերջերում արտաքինապես իր նկատելի մասով բանվոր գասագասակարգի շարժմանն եր հարել (իսկ հազով միշտ ել բուրժուական աշխարհի կողմանակից եր մնում), չեր հավատում Թուստանի բանվորական շարժման ուժին և յերկյուղ եր կրուն նրա ինքնուրույնությունից: այդ ինտելիգենցիան գտնում եր, վոր բանվորական մասսանները գեռ ևս քաղաքական պայքարի համար պատրաստված չեն և ընդունակ են կովելու միայն հանուն իրենց առորյա տնտեսական շահերի, հանուն իրենց չնշին անձնական ոգուտի: «Թագավորի դեմ կարող են կովել միայն աղատամիտները, այսինքն արգյունաբերողները, փաստաբանները, պրօֆեսորները և այլն: Ուրեմն՝ ոգնենք աղատամիտներին»: Այսպես եյին «լուսավորում» բանվորներին սոցիալ-դեմոկրատիայի այդ հսանքի ներկայացուցիչները, մի հսանք, վոր «եկոնոմիզմ» անունն եր կրում: Այսպես կոչված սոցիալ-դեմոկրատ-եկոնոմիստների այդ արտադրություններին ընդարձակ ծագալ ընդունեց: Իսկ բանվորական շարժման անենի: Լենինը ծանոթացավ աքսորավայրում: Յեվ հենց նույն

այդ աքսորավայրում նա ոկում և «եկոնոմիզմի» վեմ կովազութեր կազմակերպել: Նրա հիմնական նպատակն եր պրոլետարական շարժմանը ինքնուրույնություն և հեղափոխական նություն տալ: Նույն այդ զաղափարն ե արտահայտել վլագիշը գրանից փոքր ինչ առաջ իր «Ռուս սոցիալ-դեմոկրատների առաջ լեզվում և զերկու մեկը միուսից անբաժանելի, նպատակ ե գրված՝ դեկավարել յեվ պրոլետարիատի տեսական պայմանները» (1898) բրոյուրում, վորտեղ նա հարցն այսպես և զնում: Առա սոցիալ-դեմոկրատների առաջ լեզվու, մեկը միուսից անբաժանելի, նպատակ ե գրված՝ դեկավարել յեվ պրոլետարիատի տեսական պայմանները և ապա կազմակերպել մասսաներին:

Ով մուանում և այս վերջին նպատակը, նա բանվոր գասակարգի ամենապօխերիմ թշնամին ե գառնում, նա գավաճանում է պրոլետարիատի շահերին, նրան մենք կովի ենք հայտարարում: Սա արգեն փասորեն պրոլետարիատի գիշտատուրայի գաղափար և, վորովիտեվել ընկ. Լենինը այստեղ պրոլետարիատի կողմից իշխանությունը խթելու հարցն ե զնում:

Աքսորից հետո ընկ. Լենինն արտասահման և մեկնում, վորապես այնտեղից գեկավարի մուսաստանի բանվոր գասակարգի հեղափոխական շարժումը: Այստեղ նա մի քանի ուրիշ սոցիալ-դեմոկրատների հետ միացած «Խոկրա» (Կայձ) անունով սոցիալ-դեմոկրատական թերթ և հիմնում, վորը մի քանի տարի շարունակ մուսաստանի սոցիալ-դեմոկրատների աշխատանքն պահպանում: Բայց այդ զաղափարեները միասին առաջ հետապայում կազմեցին այն ուղղությունը, վորը «Բուլեվիզմ» անունն ե սացել: Այն ժամանակվա կոմունիստների համար ընկ. Լենինի հոգվածներն ու բրոյուրները մի տեսակ ավետարան եյին, «Կոմունիզմի այրենարան», վորտեղից նրանք նյութ եյին քաղում և պայքարելու համար պատրաստություն ու փորձառություն եյին ձեռք բերում:

Վ. Ի. Լենինը ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԵՂԱՓՈ- ԽՈՒԹՅՈՒՆԸ

1903 թվի զարնանը բանվորական շարժումը մուսաստանում: Ենդարձած ծագարձակ ծագալ ընդունեց: Իսկ բանվորական շարժման անենի: Լենինը ծանոթացավ աքսորավայրում: Յեվ հենց նույն

գուն զուգընթաց աճում եր նաև սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը՝ 1904 թվի ամառն ընկ. Լենինի ղեկավար մասնակցության յերկրորդ համագումար հրավիրվեց։ Յերբ վոր այդ համագումարում պարզվեց, վոր կուսակցության մի մասը չի ըմբռնում պրոլետարիատի տուաջ զրված խնդիրների և յությունը և իր տատանումներով կարող է խուճապ և շփոթություն առաջացնել բանվորության մեջ ընկ. Լենինը կանգ շառավ կուսակցությունը հերձելու առաջ։ Նա հրաժարվեց, «մենշևիկներից»,* վորոնք գենեվու այն ժամանակ կատարելապես ապացուցեցին, վոր իրենք համաձայնողական, մանր-բուրգուական հոսանքների ներկայացուցիչներ են։ Նա իր շուրջը հավաքեց միայն նրանց, ովքեր հավատում եին ուստական բանվորան շարժման ուժերին, ովքեր պատրաստ եին հեղափոխական կորի մղելու վոչ թե խոսքերով, այլ զործով։

1905 թվին (ոստական առաջին հեղափոխություն) կոմունիստական կուսակցությունն (այն ժամանակ սոցիալ-դեմոկրատական կուս.), ընկ. Լենինի շնորհիվ, այդ հեղափոխության մեջ ունենալիք պրոլետարիատի դերին պատրաստի «բոլշևիկյան» ըմբռնողությամբ և մոտենում։ Մեր յերկիրն այնպիսի դրության մեջ եր գտնվում, վոր առաջին տեղը յերկու ինդիր եյին բըռնում—մեկը թագավորական կարգերի տապալման խնդիրն եր, իսկ այլ կալվածախրական, թագավորական տան և յեկեղեցապատկան ու վանքապատկան հողերը գյուղացիների կողմից բռնազրագիրը։ Ֆարբիկաների և գործարանների գրավման համար վոչ բանվոր դասակարգն եր այն ժամանակ պատրաստ, վոչ ել սոցիալ դեմցիկրատական կուսակցությունը, և այդ հարցն այն ժամանակ գեռիկս հերթական չեր, Բայց այն ժամանակ արդեն մեր կուսակցությունն այնպիսի նպատակներ եր գնում, ինչպիսին անմիջապես 8-ժամյա բանվորական որ, շաբաթական 42-ժամյա հանգիստ սահմանելը և հիվանդություններից, գժրախտ պատահարներից, գործազրկությունից և այն

*) Այսպիսի անուն եր ստացել սոցիալ-դեմոկրատական կուսակցության այն մասը, վորը տատանվում եր և հաստատուն վարքագիծ, չեր կտրողանում հանդես բերի։ Սրանց նրա համար մենշևիկ (ֆոքրամասնական) անվանեցին, վոր կուսակցության կենտրոնական կոմիտեյի ընտրության ժամանակ սրանք նայների փոքրամասնություն ստացան։

ապահովագրելն եր ի հաշիվ կապիտալիստների, ու աշխատանքի պաշտպանություն՝ ընտրովի աշխատանքի տհառչների միջոցով և այլն։ Իսկ ինչոք զույս մենշևիկները մի բան եյին միայն գիտակցում, քանի վոր հեղափոխությունը սոցիալիստական չի—այսինքը ֆարբիկաներն ու գործարաններն անմիջապես չեն խվում իրենց տերերից—ուրեմն հեղափոխությունը դեկավարողը բուրժուազիան և ընկ. Լենինն այս «թերիան» վոչչացնող քննակատության յենթարկեց։

Նա ըմբռնեց այն առանձնահատուկ պայմանները, վորոնց մեջ այն ժամանակ գտնվում եր միուսաստանը, յերբ վոչ զուարժուական, վոչ ել զուտ սոցիալիստական հեղափոխությունն եր հնարավոր։ Մեր յերկրի հեղափոխական շարժման ընթացքի և այդ շարժման մեջ զանազան դասակարգերի դերը խորապես ուսումնակրելու հետեւանքով, ընկ. Լենինը յեկավ այն անհողողդ յեզրակացուրյանը, վոր 1905 թվի հեղափոխուրյանը հետեւելու յեպրոլետարիատի յեկ գրուղացիուրյան հեղափոխական զիկտառուրան յեկ այդ շարժման զիխավոր շարժի ուժ պրոլետարիատն և լինելու։ Պրոլետարիատի պայքարը պետք ե այնպես տարմի, վոր պեսզի իր կողմը գրավի գյուղացիսկրունը, վոր տահագրզուական ինդրուսի և սահելի յե սահեալ միայն պրոլետարիատի հետ միասին բազավորական կարգերի գեմ կովելու միջոցով։ Կուսակցությունը պարտավոր ե չստորացնել և բուրժուակայի ճաշակին ու տրամադրություններին չհարսարեցնել իր պայքարը, այլ պարզել բուրժուազիայի եյությունը և ապացուցել մասսաներին, վոր նրանց և բուրժուազիայի շահերի հակառակ են իրար

Փարիզի կոմունայից*) հետո առաջին անգամն եր, վոր Լենինը պրոլետարիատի (գույղացիության հետ միացած) առաջպետական իշխանություն խլելու, այդ իշխանությունը բուրժուազիայից ու կարգածատերերից կովով խլելու՝ ինդիր զրեց։ Դեռ յեվս այդ ժամանակ ընկ. Լենինը այնքան ել սիրով չեր վերաբերվում այսպիս կոչված «գեմոկրտիային», վորպիսի կարգերում յեկամուռներն ու արտօնությունները շահագործողների ձեռքին են մնում. զեր յեվս այն ժամանակ մենշևիկները լենինին «իսոսվարա», «գավաղիր», առասարակ «վտանգավոր մարդ»

*) Փարիզի բանվորների 1871 թվականի ապստամբությունը։

Եյին համարում—չե՞ վոր նա կամենում եր, վոր հեղափոխությունն առանց բուրժուազիայի լինի և բուրժուազիայի դեմ ուղղվի: Հենց վոր բանվոր դասակարգի ապստամբության ձնշման տակ թագավորը վորոշ զիջումներ արավ (1905 թվի հոկտեմբերի 17-ի հրովարտակը ազատությունների մասին) և մի յերկու ամսով փոքր ինչ ազատություններեց—Վ. Իլյիչը շատապեց գեղի մեռաստան, վորպեսզի այնտեղ, հեղափոխության կրակիսահմաններում գտնվելով, գեկավարի պրոլետարիատի պայքարը:

Նու ուրիշի անցագրով եր ապրում նախ Լենինգրադում, ապա Լենինգրադի մոտ, Ֆինլանդիայում, իսկ յերբ վոր թագավորի պահպանողական բաժնի սպասավորները այդտեղ և հասան՝ Վ. Իլյիչը նորից կուսակցության պահանջմանը արտա- սահման մեկնեց և այնտեղ մնաց մինչեվ 1917 թվի հեղափոխությունը: Այդտեղ ստարության մեջ նա ծանր պայմաններում եր ապրում, ամենաանհրաժեշտ բաների կարոտ լինելով և բառիս իսկական իմաստով կիսաքաղց կյանք եր անցկացնում: Բոլոր այդ կենսական անհաջողություններն ընկ. Լենինը դատարկ և անկարեվոր բան եր համարում: Նրա մաքերը միայն բոլոր աշխատավորների շահերի շուրջն եյին պտտում միշտ:

1905 թվականի հեղափոխության փորձը հաստատեց, վոր ընկ. Լենինի ուսուցածը կատարյալ ճշմարտություն և այդ փորձն ապացուցեց, վոր այդ ժամանակվանից սկսած բուրժուազիան, նույնիսկ նրա ամենաձայն խմբակներն ու մասերը, վոչ մի հեղափոխություն չեն կարող անել, ինչքան ել վոր աղաղակեն այդ հեղափոխության մասին, և վոր պրոլետարիատը պետք և պատրաստվի նոր հեղափոխություն բարձրացնելու ընդգեմ բուրժուազիայի, հանուն բանվոր դասակարգի իշխանության:

Հենց վոր բուրժուազիան աեսավ, վոր բանվոր դասակարգը և պյուղացիությունը իրոք և լրջուն թագավորի ու կալվածատերերի, մասամբ ել իր, բուրժուազիայի, ոճիքն են բռնում—նավախեցավ հեղափոխությունից, կալվածատերերի ու թագավորի գիրկն ընկալ, և դրանց միությունը ճզմեց սուսական առաջին հեղափոխությունը:

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՐԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Վերահաստատվեցին բակցիան, զինվորական դաշտային դատարանները, կախազուր, տաժանակրությունն ու աքսորը

Այսպիս կոչված «կրթված հասարակությունը» և նույնիսկ այսպիս կոչված «գևոնկրատուկան ինտելիգենցիան» մեր պարտության պատճառները «վորոնելու» մեջ խորացան, այսինքն, պարզ ասած, ձեռք վերցրին ցարիզմի դեմ վորեվե կուկ մղելու մտքից: Այդ «վորոնումներից» մենշեվիկներն եւ պոկ չեկան: Հեղափոխության պարտության վիսավոր պատճառը նրանց կարծիքով մեր անվեգալ (գաղտնի զործող կուսակցությունն եր, ուրեմն՝ թող կուսակցությունը: Հեղափոխությունը հաղթությամբ չպահպահվեց, ուրեմն՝ հեղափոխությունն առնաստրակ անկարիլի բան է: Կցցեց Խոմանովյան ցարական կարգերի սահմաններում ինադարձ, հանգիստ, լեզար (որինական, թուլլատրված) գործունեությունը: Յեվ առնաստրակ պետք և քիչ տարբել հեղափոխությամբ:

Դանդաղկոտ քայլով
վախկոտ զիգզագով
կամաց դեղ առաջ,
բանվորական դաս:

Այս եր մենշեվիկյան իմաստության վերջին խոսքը 1905 թվից հետո:

Պետք եր տեսնել այդ ժամանակ վլադիմիր իլլիչին: Շատ ընկերներ զեռ յեխ ճավատում եյին, թի հնարավոր և «ընդհանուր լեզու, գտնել», «միանարար աշխատել» մենշեվիկների հնու: Վլադիմիր իլյիչը զեռեվս այն ժամանակ եր հասկանում այն, ինչը մենք միայն հետաքայում հաօկացանք այսինքն, վոր մենշեվիկներն այլեվս սոցիալիստներ չեն, նրանք բանվոր դասակարգի դավաձաններ են: Մենք պարաւավոր ենք վոչ թե «ընդհանուր լեզու» գոտնել նրանց հետ, այլ անինա կերպով պետք և պարզենք նրանց ժանր-բուրժուազիան եյությունը բանվորների առաջ: Յեվ նա զիմեց այդ աշխատանքին այսպես, ինչպիս վոր նա յեր կարող զիմել մի զործի: Նա սպառիչ բացուրություն ավագ մենշեվիզին, համաձայնողականությանը, «լիկվիդատորությանը» (մենշեվիկները կամենում եյին վոչնչացնել, լիկվիդացիայի յենթարկել կուսակցությունը), վորը նրա կարծիքով բանվոր դասակարգի հետամնաց մասի վրա բուրժուազիայի ունեցած պղկեցության արտահայտությունն է:

Ե պատասխան մենենիկների «կարչի կուսակցությունը» լոգունգի, ընկ. Լենինը «Փառապենեցեք կուսակցությունը» կանչե և ուղղում մասսաներին: Այդ վարկանին նա հանգես ե գալիս իր վող հասակով վորպես մեր կրւանցության կազ-

մակերպից, նա իւ ռուբն է հավատում բանելից, ախորից, սա-
ժանակիր աշխատանիներից յև գնդակահարուքյունից ազա-
մ նացած կուսակցության մնացորդներին, սեղմաօար մարտա-
կան զրայուներ է կազմում նրանցից յև նորինց նրանց նա-
կատամարփ յև պատրաստում, այս անգամ արդեն նոր յեվ, ի
հարկ է հաղթական, իեղափոխության համար:

Ով վոր կամենում և ճանաչիլ այս կամ այն մարդուն—թող
վոչ թե ուրախության, այլ վշտի որերին, վոչ թե աշխատանքի
մասսայական վոգեվորության պայմաններում, այլ ընդհանուր
կազմալուծման պայմաններում տեսնի նրան։ Ով վոր կամենում
և ըմբռնել ու հասկանալ Վլադիմիր Իլյիչի հսկա հոգին—թող
ըեակցիայի տարիներին դառնա, այն ամբողջ տասնամյակին,
վորը փոխարինեց 1905 փոթորկալից թվին։ Նա, վերջին դարի
այդ ամենանշանվոր մարդը, բջիջներ կազմակերպելու, փոքրիկ
խմբերում և խմբակցություններում պրոպագանդ և ագիտացիա
մղելու մանր, առորյա, սեվ աշխատանքի մեջ և թափուրում։

**Ամբողջ 7—8 տարվա անընդիհաս պայմարեն ի պատճառ-
նություն կուսակցության, հոգիածեներին հուսագրելը, փոփա-
ցած-ցրվածներին հավաքելն ընկ. Լենինը ամենակարեվոր, ա-
մենաառաջնակարգ, ամենամեծ յեվ ասենակեղափոխական գոր-
ծութեյություն եր համարում: Նա միշտ մեծ էր մնում նաև
փոքրիկ, աննշան գործերում, ամենամանրն ու ամենաանշանն ել
նրա ձեռքերում մեծ ու նշանակալից եր գառնում: Յեվ յեթե կան
այնպիսիները, վորոնց պետք ե ապացուցել, թե այդ, առաջին
հայացքից աննշան թվացող, աշխատանքն իրոք ամենամեծ նշա-
նակությունն ե ունեցել, —մենք զրանց կիշեցնենք անմիջակա-
նորեն 1914 թվի պատերազմի հայտարարմանը նախարդող որերը,
յերբ վոր այդ «աննշան» աշխատանքի հետեվանքով լենինդրադը
բռնված եր ընդհանուր գործադրութիւն և ապօտածըռության կրակով
և յերբ վոր ամբողջ Ռուսաստանում մեր կուսակցության զեկա-
վարությամբ ծավալվում և աճում եր պրոլետարական հեղափո-
խական շարժումը:**

Յեթի այդ «անհան» աշխատանքը չլիներ — մեր կուսակցությունն հետագայում պետական իշխանության վկուսի կանգնեռու ընդունակ չեր դառնա: Պահպանել կուսակցությունը, պատրաստել նրան գալիք նպատակների համար — այս եր Վլագիմիր Իլյիչ Դոբյանի բետական տարիներին:

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԿԱՆ ՀԵՂՓՈԽՈՒ-
ԹՅՈՒՆԸ

Պատերազմն ամեն ինչ տակն ու վրա արեց: Այսպես կը վաճ Ա-րդ ինտերնացիոնալի^{*}) պարագլուխների ճնշող մեծամաս-նությունը հանկարծ «հայրենասիրությամբ» տոգորվեց: Ինտեր-նացիոնալը և զանազան յերկրների աշխատավորների յեղայր-ությունը շոգիացան, վերացան: Բոլորն ել հանկարծ տեսան, վոր «հայրենիք» ունեն: Սոցիալիստների մի ժամը, վոր ավելի վայելուչ մարդկանցից եր բաղկացած, տատանվում եր, չիմանալով, թե ինչ անի ուազմական համատարած յար-ի պայմաններում: Պատերազմը վրա հասավ այն ժամանակ, յերբ ընկ. Լենինը Ավտրիայի հետ ընկած մի անկյունում, կարպատյան լեռներում եր գոնգում: Ավտրիական կառա-վարությունը վախեցավ—Ալինի թե ընկեր Լենինը մտադիր ե այլուելից ոգնության գալ Խուսաստանի թագավորական կառա-վարությանը—ու իրեւ «փառանգավոր ոսի», ձերբակալեց նրան: Բթամիտ և ապօռչ մարդիկ: Նրանք չեյին հաւաքանում, վոր Վլ-իլիշը հավասար չափով ե ատում թե ուսւաց թագավորի կառա-վարությունը, թե ավտրիական կայսրի կառավարությունը:

զարությունը, բո ականիքը՝ լուսաւում է առաջ և առ պատճենագործությունը հաջողվեց դուրս պրծնել բանտից, նա պատերազմի գեմ կուղող առաջին մարտիկի տեղը գրավեց: Միջազգային սոցիալիզմի ականավոր գործիչների մեջ ընկ. Լենինը միակն եր, զոր մի գարկյան անգամ չկորցրեց իր գործիք: Նա առաջինն եր, զոր այդ պատերազմին բալանժիական անունը սկսեց; Նա առաջինն եր, զոր մահվան զատկներու արձակեց կապիտալիստական կարգերին, գտնելով, զոր կապիտալիզմը ինեղ-զվելու յե իր խոկ բափած արյան ծովում: Յերկրների միջնեկ ծագած բալանժիական պատերազմը, — առուս եր ընկ. Լենինը, անխուսափելիութեն պրակեարիատի յեկ բուրժուազիայի հաղա-քացիական պատերազմի յե վերածելու յեկ ապա բուրժուազիա-յի գեմն ուղղված բանգույների ու բոլոր աշխատավորների ա-

